

Քան ըզլըքնաղ քո երգ՝ զերկինս բերկրէին :
 Քաջ լեր , վերին տոհմի գըճճեալ դու ծընունդ .
 Ի ճակատուդ տանիս ըզվեհ քո սերունդ :
 Տեսեալ դքեզ մարդ , ճանաչէ յաչըս քոյին
 Ձադօտ նըշոյլ պայծառութեանն երկնային :
 Երգիչդ անմահ , ծանիր քեզէն զանձըն քոյ .
 Թո՛ղ զհայհոյանս , զվարանս՝ որդւոց գիշերոյ .
 Խոտեալ ըզսուտ պաշտօն , զոր տան քեզ յերկրի :
 Ուր բարին չիք , անտի եւ փառք են հեռի :
 Ա՛ռ ըզքո կայս՝ ի նախկին փայլ գերապանծ ,
 Ի մաքրափայլ որդիս լուսոյ եւ փառաց ,
 Ձորս տիրական իւրով շընչով վառեաց Տէր ,
 Կարգեալ յօրհնիս , եւ ի հաւատս եւ ի սէր :

ԹԱՐԳՄ. Հ. ՍԱՄ. ԿԱՅՍԵՐԵԱՆ

ԼԱՄԱՐԴԻՆ

ՄԱՆՐԱՎԵՊՔ

Վարդի պզտիկ տռանկը .

Այսերդ անունով տղայ մը , թաղա-
 րի մը մէջ վարդենիի փոքրիկ բոյս մը
 տնկած էր , գարնան սկիզբները ըլլա-
 լով , վրան կարմրիկ կոկոններով լեցուն
 էր : Ամեն անգամ գեղեցիկ օգերու , վար-
 դենին պատուհանին առջևը կը հանէր ,
 և ամեն իրիկուն երբոր գիշերուան օդը
 կծու կ'ըլլար , ներս խուցը կ'առնէր .
 սակայն իրիկուն մը հարկաւոր չսեպեց
 այս զգուշութիւնը , օդը իրեն հանգարտ
 և մեղմ երևնալուն . բայց երկրորդ ա-
 ռաւօտն տեսաւ որ վարդերը թարշա-
 մած էին : Ան ատեն սկսաւ ցաւով վը-
 րան նայիլ լալ և ըսել . « Այսպէս ու-
 րեմն մէկ անհոգութիւն մը միայն բո-
 լոր աշխատանացս արգիւնքը փճացուց .
 անոր վրայ որ այնչափ հոգ տարեր էի ,
 ասանկ քիչ ժամանակի մէջ կորսնցը-
 նեմ » : ... — Մայրը այն ատեն ըսաւ .
 « Աս պզտիկ դէպքը որ քեզի այնչափ

վիշտ կը պատճառէ , կրնայ մեծ բարե-
 բախտութեան մը աղբիւր ըլլալ . սոր-
 վէ ասով , որ մոլութիւնն՝ անմեղու-
 թեան այն ֆնասը կ'ընէ , ինչ որ սառն՝
 ծաղկաւէտ վարդենւոյն . ուրեմն , ամեն
 մոլութենէ ազատ ըլլալու համար՝ պէտք
 է փութաջան խնամք և շարունակ մտա-
 դրութիւն ունենալ :

ՇՄԻԹ

Երեք թարեկամք .

Մարդ մը երեք բարեկամ ունէր . ա-
 սոնց երկուքը սիրելի էին իրեն , իսկ
 երրորդը անտարբեր , թէպէտ և այս եր-
 րորդը իրեն վրայ աւելի անկեղծ սէր մը
 ունէր : Օր մը դատաստանարան կան-
 չուեցաւ . ուստի գնաց ըսաւ իր բարե-
 կամներուն թէ ո՛ր կ'ուզէ դալ ինծի վը-
 կայ ըլլայ . վասն զի ծանր ամբաստա-
 նութիւն մը կ'ըլլայ վրաս : Բարեկամնե-
 րէն առջինը շուտ մը ինքզինքը դուրս
 հանեց ըսելով թէ ուրիշ գործոյ դքա-
 ղած ըլլալով , չեմ կրնար քեզի ընկե-
 րանալ : Երկրորդը՝ իրեն հետ միատեղ
 գնաց ինչուան դատաստանարանին դու-
 ր , հոն՝ թողուց և ետ դարձաւ : Երրոր-

զը՝ որուն վրայ որ շատ վստահութիւն
չունէր, ներս մտաւ զինքը պաշտպա-
նեց, և շատ կերպով անոր անմեղու-
թիւնը ցըցուց, այնպէս որ դատաւորը
զինքը ազատ արձակեց: Մարդս ալ ի-
րեք բարեկամ ունի այս աշխարհիս վը-
րայ. ինչ վիճակի մէջ կ'ըլլան ասոնք
մահուան ժամանակը, երբոր Աստուած
զինքը իր ատենը կը կանչէ: Ստակը,
իր սիրելի բարեկամը, սկզբան մէկէն
կը թողու զինքը և հետը չերթար: Ազ-
գակները և բարեկամը իրեն հետ միա-
տեղ կ'երթան ինչուան գերեզմանին
դուռը, և նորէն կը դառնան իրենց բնա-
կարանը: Երբորդ ուղեկից կ'ըլլայ ի-
րեն հետ ինչուան բարձրագոյն դատա-
ւորին ակօռը, այսինքն իր բարեգոր-
ծութիւնքը: Իրմէ առաջ կը կանխեն
կ'երթան, իրեն համար կը բարեխօսեն
և կ'արդարացնեն զինքը, եթէ բազմա-
թիւ և ուղիղ գիտաւորութեամբ եղած
ըլլան:

Յորենոյ հատիկը.

Եւրոպայէ այն ինչ հասած նաւու մը
միջնայարկը, խաղաղական ծովուն կըղ-

զինքուն բնակ երկու երիտասարդք զը-
տան ցորենոյ հատիկ մը. ասոնցմէ ե-
րէցը ըսաւ, « անտարակոյս եմ որ ցո-
րեանը օգտակար տունկ մըն է, բայց մէկ
հատէ միայն ինչ կ'ելլայ », և արհա-
մարհանքը նետեց զայն: Իր ընկերը, որ
աւելի խելացի էր, աճապարեց ու ա-
ռաւ զայն գետնէն: Նոյն իրիկունը տըն-
կեց զայն և խնամքով շարունակ փոյթ
տարաւ վրան: Առջի քաղցիւն մէկ մատ-
նոցի մը մէջ դրաւ ժողովածները. երկ-
րորդ անգամ բաժակի մը մէջ լեցուց,
իսկ երրորդ անգամ կըցաւ քանի մը
հատիկ իր բարեկամներուն ալ բաժ-
նել. ժամանակաւ, ոչ միայն առատ
հունձք ժողովեց, այլ նաև իր երկրին մէջ
այնպիսի մշակութիւն մը մտցնելուն
փառքն ալ ստացաւ՝ որ ոչ միայն իր այլ
և իր հայրենակցաց բաղդը շինեց: Այս-
պէս ահա մեծամեծ արգասեաց պատ-
ճառ կ'ըլլայ այն՝ որ ոչ աշխատանքի
ցամաքութենէն և ոչ արդեանց ուշա-
նալէն կը լքանի:

ՊՈՒԼԱՆԺԷ

ՆՈՐԱՏԻՊ ՄԱՏԵԱՆ

ՎՐՈՒՐԻ ՈՐՄՋԴԱՆԱՅ

ԱՌԱԿԱՅ

Գ Ի Ր Բ Ե Ր Կ Ե Ա Կ

Խըրատս ընդ խաղ նախ փոխադացին¹ խառնեաց ըզգօն ծերունին.
Ընդ նոյն ապա ընդ արտ 'ի հունձ անց ձերբազատն Աւգոստեայ².
Ըզհետ նոցին շըրջիմ ես արդ հասկաքաղ,
Առ 'ի զապրեալսն 'ի բազմաչեայց անտի քաղել հընձողաց:

¹ Եսովպոս առակախօս Յունաց:

² Փեդրոս առակախօս Լատինաց: